# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Արսեն Մնացականյանի, Աշոտ Ավագյանի, Վահե Մովսիսյանի, Գոհար Մկրտչյանի Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ**

**Գործուղված պաշտոնատար անձ**. Արսեն Մնացականյան, Աշոտ Ավագյան, Վահե Մովսիսյան, Գոհար Մկրտչյան:

**Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը.** Գլխավոր հարկադիր կատարող, գլխավոր քարտուղար, գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Իրավաբանական բաժնի պետ

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Ռուսաստանի Դաշնություն 2023 թվականի օգոստոսի 27-30-ը:

**Հրավիրող կողմը՝** Ռուսաստանի Դաշնության դատական պրիստավների դաշնային ծառայության (այսուհետ՝ նաև՝ Դաշնային ծառայություն):

**Գործուղման նպատակը.** Ծառայության Դաշնային ծառայության միջև ստորագրված համագործակցության հուշագրի իրականացման նպատակով Հայաստանի և Ռուսաստանի արդարադատության նախարարների կողմից ստորագրված 2022-2023թթ. համագործակցության ծրագրի կետերով նախատեսված երկկողմանի այց:

**Քննարկված թեմաներ.**

Այցի ընթացքում քննարկվել է երկու կառույցների միջև հետագա փոխգործակցության, այդ թվում՝ երկկողմանի այցերի, հարկադիր կատարման ոլորտում փորձի փոխանակման, հարկադիր կատարման ոլորտում նոր թվային տեխնոլոգիաների ներդրման, տեղեկատվության փոխանակման և այլ ուղղություններով հետագա համագործակցությանը վերաբերվող հարցեր:

**Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի ընթացքում Գլխավոր հարկադիր կատարող Ա. Մնացականյանի գլխավորած պատվիրակությունը Մոսկվա քաղաքում հանդիպել է Ռուսաստանի Դաշնության դատական կարգադրիչների դաշնային ծառայության տնօրեն, գլխավոր հարկադիր կատարող Դմիտրի Արիստովի գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև Ռուսաստանի Դաշնության դատական կարգադրիչների դաշնային ծառայության տնօրենի տեղակալ պարոն Վլադիմիր Վորոնինի և ՌԴ դատական կարգադրիների Կալինինգրադի տարածքային ստորաբաժանման պետի պարտականությունների կատարող Օլգա Յակովլևայի հետ:

Հանդիպումների ընթացքում Արսեն Մնացականյանը հանդես է եկել ելույթով, որտեղ ի թիվս այլնի, ռուս գործընկերներին ներկայացրել նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2022-2026թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխման գործընթացի հիմնական ուղղությունները, որոնք միտված են բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, առավելագույնս ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրմանը:

Գլխավոր հարկադիր կատարողը անդրադարձել է հարկադիր կատարման ոլորտում առաջարկվող օրենսդրական փոփոխություններով նախատեսվող նոր իրավակարգավորումներին, ինչպես նաև կատարողական վարույթի հետագա թվայնացման և էլեկտրոնային համակարգերի հետագա կատարելագործման հարցերին:

Այցի ընթացքում ելույթ է ունեցել նաև գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ Վ. Մովսիսյանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում ներկայումս շրջանառվող «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծի հիմնական ուղղությունները:

Այցի ընթացքում Ծառայության աշխատակիցները ծանոթացել են նաև ՌԴ դատական կարգադրիչների դաշնային ծառայության կողմից ստեղծված ռոբոտի աշխատանքներին, որը ինքնաշխատ եղանակով տրամադրում է տեղեկատվություն և իրականացնում քաղաքացիների սպասարկման ոլորտում այլ գործառույթներ:

Այցի ընթացքում քննարկվել է երեխայի տեսակցության և հանձնման վերաբերյալ կատարողական վարույթների կատարման, աստրենտի ինստիտուտի, բանկերում պահվող պահատուփերի բռնագանձման առանձնահատկությունները և այլն: Ծառայության պատվիրակությունը ծանոթացել է նաև գործընկեր կառույցներում ներկայումս կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաներին և այլ նորարարություններին:

Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի ընթացքում Ծառայության պատվիրակությունը այցելել է ՌԴ դատական կարգադրիների Կալինինգրադի տարածքային

ստորաբաժանում և տեղում ծանոթացել տարածքային ստորաբաժանման գործունեության կազմակերպմանը:

**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Այցի ավարտին կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը ամրապնդելու և զարգացնելու հետագա համագործակցությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերել երկու կառույցներում ծառայող հարկադիր կատարողների փոխադարձ այցերի վերաբերյալ:

**Ստորագրությունը, ամսաթիվը.**

**04.09.2023թ.**

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐՍԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ